

ՀԱՅ ԱԶԳԻ ԻՂՋԵՐԸ

Զափաղանց չեն հայ ազգի իղձերը, որոց իրագործումը դարերի ընթացքում այս բազմաչարչար ժողովուրդը սպասում է:

Հինգ, վեց հարիւր տարի հայը տառապում է քրիստոնեայ լինելու պատճառով և սակայն ձեռք չէ քաշում իւր կրօնից, որ այնքան աղէտալի օրերի պատճառ է դառել նրա համար: Կրօնը հայի համար դառել է աղդայնութեան տարր, որպէս լեզուն և ցեղային միւս առանձնայատկութիւնները: Իւր ազգային եկեղեցին և լեզուն պահելու և իւր հոգեկան ընդունակութիւնները ազատ զարդացնելու ամենատարրական իրաւունքներ է խնդրել հայը դարերի ընթացքում, որպէս և կեանքի ու ստացուածքի ապահովութեան պայմաններ:

Այսօր էլ հայի գլխաւոր պահանջները պտտւում են վերոյիշեալ ամենաշնչին իղձերի շուրջը:

Դիտեն արդեօք հայի բանսարկութշնամինները, որ ծայրայեղ համարուած հայ տարրերը և կուսակցութիւններն անգամ իրենց ծրագիրների մէջ երբէք չեն ունեցել հայկական անկախութեան խնդիր՝ նոյն իսկ թիւրքահայաստանի վերաբերմամբ: Այս այսպէս լինելով հանդերձ սակայն մենք ենթարկուել ենք անարդար հալածանքի հէնց նրանց կողմից, որոնց մենք բնական դաշնակից ենք համարել և բարեկամ և իրօք բարեկամ էլ եղել ենք:

Իսկապէս ասած Հայկական դաւառների ըեփօրմների հարցը և հայութեան կուլտուրական զարդացման

յոյսերը մեր ազգի մէջ սկսուել են արծարծուել աւելի ուժեղ կերպով Ռուսաստանի անմիջական ազդեցութեան տակ և Ռուսաց տէրութեան աջակցութեամբ Երբոր Մեծն Պետրոսը հանճարեղ հեռատեսութեամբ ծրագրեց Ռուսիայի ապագայ դերը մերձակայ Արևելքում նա իւր թափանցիկ մարդարէական նրբամտութեամբ էլ հասկացաւ հայ տարրի անհրաժեշտ կարևորութիւնը իւր նպատակների իրագործման համար ։ Եթէ վերջին տարիների մեր կարճամիտ թշնամիները մի փոքր պատմական գիտութիւն ունենային՝ նրանք, նոյն իսկ Ռուսաստանի էական շահերին հակառակ, չէին խախտիլ Ռուսիայի աւանդական քաղաքականութիւնը և կրօնակի պատճառ չէին գառնալ ոչ հայկական կատորածների և ոչ էլ իրենց բնական թշնամիների զօրեղանալուն, Մեր ասածները պատմական փաստեր են, որոնք ծանօթ պիտի լինին ամեն մի գրագէտ կովկասցու։

Այս կողմից վերին աստիճանի հետաքրքրական և հարուստ գիրը է 1898 թուին Պետերբուրգ հրատարակուած պ. Կ. Եղեանի մեծաշան աշխատութիւնը, որ «Շուշենի Պետր Վելիկաց ը արմանքում» վերնագիրն է կրում։ Այս ճշմարտապատում գիրքը աւելի մեծ ծառայութիւն կարող է մատուցանել Ռուսաստանի իսկական շահերին, քան նոյն Ռուսաստանի անունից գործող անթիւ և անհամար Վելիչկոյանման կարճամիտ հայրենասէրներ, որպէս և շատ մեծ գործ է կատարել այս գիրը յօդուտ հայութեան, քան թէ նոյն Եղեանի թշնամի բազմաթիւ սուս հայ ազգասէրներ։ Այս գիրը գալիս է վաւերաթղթերով ապացուցանելու, որ հայկական խնդիրը իւր նոյն իսկ ներկայ դրութեամբ ստեղծուած է և հրապարակ հանոււած Ռուսաստանի նախաձեռնութեամբ դեռ հարիւրաւոր տարիներ առաջ և որ ոչ մի ծայրայեղ հայ յեղափոխական կօմիտետ կամ կազմակերպութիւն իւր վերջնական ծգտումներով ու նպատակներով չէ կարող նոյն իսկ հեռաւոր հասկացողու-

թիւն ունենալ այն բաղտաւորութեան մասին, ինչ որ հայ ժողովրդին խոստանում էին Ռուսաստանի թագաւկիրներից հանճարեղները։ Այս, հարիւրաւոր տարիներ առաջ Ռուսաստանը աւելի լաւ էր հասկանում իւր էաւ կան շահերը մօտաւոր արևելքում և աւելի լաւ էր ճանաչում իւր բարեկամներին և թշնամիներին, քան թէ Կատկօվների, Վելլչկօնների և Ռուփորինների Ռուսաստանը։ Բայց դառնանք պատմութեանը։

Մեր օրերում սակայն պատմութեան դիմողները շատ քիչ են, որովհետեւ մտածողութեամբ և դատողութեամբ ապրողները առհասարակ քիչ են, իսկ րոպէաւ կան կրքերով և ժամանակաւոր շահերով ապրողները շատ։ Սակայն ազգերի կեանքը կապուած է պատմութեան հետ, իսկ անհատներինը օրերի և տարիների հետ։ Եւ երբոր մարդիկ համարձակութիւն ունին դատելու մի ազգի վիճակի մասին և վճռելու ազգային խնդիրներ, նրանք պարտաւոր են թերթելու պատմութեան էջերը և ոչ թէ ղեկավարուեն իրենց տեսածով ու լսածով։

Արդէն վերև յիշեցինք հարեանցօրէն, որ Կովկասեան երկրում Ռուսաստանը և հայութիւնը բնական դաշնակիցներ են։ Պատմական իրողութիւնն և պատմութիւնը չեն կարող յեղաշրջել ոչ Ռուսաստանի իսկական շահերի թշնամի ռուս մարդիկ, նոյն իսկ եթէ նրանք լինեն բարձրաստիճան, բայց կարճամիտ չինովնիկներ, և ոչ հայութեան թշնամի հայեր, եթէ նրանք լինեն նոյն իսկ հայ ազգասէրի եարլիկով զարդարուած։

Իսկ պատմութիւնը չէ կարելի հաշուել տասնեակ տարիներով և ազգերի յարաբերութեան խնդիրը քննելիս 15—20 տարուայ դէպերը պատմութեան անիւը իսպառ շուռ տալու նշանակութիւն չպիտի ունենան։ Եթէ վերջին 15—20 տարուայ ընթացքում ռուս կարճամիտ չինովնիկների և հայութեան գաղտնի թշնամիների շնորհիւ Ռուսաստանի քաղաքականութիւնը թէ

իւր իսկական շահերի նկատմամբ և թէ հայ ժողովրդի վերաբերութեամբ երկու կողմերի համար էլ ցաւալի և կորստաբեր ընթացք ստացաւ, այդ դեռ չի նշանակում, որ պատմութիւնը իւր իսկական դերով հանդէս չէ գաւառու և չէ լուսաբանելու Ռուսաստանի և հայութեան փոխադարձ յարաբերութեանց իսկական կոչումը:

Իսկ պատմութիւնը ահա թէ ինչ է ասում. քրիստոնեայ Հայերը և Վրացիները ոչ միայն իրենց փրկութեան յօյսը Ռուսաստանի վերայ ունէին դարերով առաջ, այլ և նոքա իրենց արիւնով են նպաստել ռուսների Կովկաս մտնելուն: Երբոր Պետրոս մեծը Դերբէնդի իւր արշաւանքից յետոյ չկարողացաւ հաստատուել Կովկասեան ափերում և հեռացաւ երկրից, Թիֆլիզի այն ժամանակուայ առաջնորդ Փարվազեանց արքեպիսկոպոսը 1722 թուի դեկտեմբերի 12-ին ահա թէ ինչ է գրում Ռուսաստանում եղած Մինաս վարդապետին.

Մենք 2 ամիս սպասում էինք կայսեր Գանձակում Քրիստոսի Երուսաղէմ մտնելուն պէս, բայց յետոյ իմացանք, որ թագաւորը վերադարձել է, իսկ բոլոր քրիստոնեաները խիստ ցաւեցին ու լացով ցրուեցին և դարձան իրանց տները, իսկ մենք Վախտանգի հետ միասին գնացինք Վրաստան, ուր տեսանք Վախտանգի ու կայսեր դեսպանի մեզ ուղած նամակները, որի մասին իմանալով անհաւատները՝ տարածեցին, թէ մենք արդէն ընդունել ենք կայսեր հպատակութիւնը. իսկ մենք մնացինք թիւրքերի, պարսիկների և լէզգիների մէջ ինչպէս մի խախուտ նաւ ծովի վերայ, չունենալով ոչ մեյս, բացի Աստծուց և կայսրից: Յանուն Աստուծոյ և քրիստոնէութեան խնդրում եմ քեզ, աշխատիր, որ կայսերական զօրքերը շտապեն Շամախի և հէնց որ կիմանանք այդ, մնը հարիւրհազար հայ ժողովրդով կղիմաւորենք եւ զինուած պատրաստ կլինինք»:¹⁾

¹⁾ Այս և յետագայ քաղուածները արել ենք Թզօվъ. Շոաշ-Петրա վել. ը Արմ նար. գրքից:

Մի փոքր յետոյ նոյն Պետրոս Մեծը գրում է.
«Ա ամենահաստատ կերպով յօւսադրել հայ ժու-
ղովուրդը մեր կայսերական ողորմածութեամբ և յայտ-
նել նրանց, թէ մենք համաձայն նոցա խնդրի մեր հո-
վանաւորութեան տակ առնել և անհաւատների լծից
ազատել պատրաստ ենք և տրամադրեաւ»:

Յայտնի է նոյնպէս, որ ոռւսները մեր երկիրը դեռ
չտիրապետած ժամանակ Հայոց թէ ժողովուրդը և թէ
հոգեսորականութիւնը ամեն կերպ ձգտում էին դիւրաց-
նելու Ռուսաստանի արշաւանքները և նպաստում, իսկ
մեր Սիմէօն մեծագործ կաթուղիկոսը շարադրեց և կով-
կասի բոլոր հայ եկեղեցիներում մացրեց Ռուսաստանի
յաջողութեան և ռուսաց կայսերական տան համար
մաղթանք այն ժամանակ, երբ մեր երկիրը դեռ պար-
սից տիրապետութեան տակ էր: Յովաչի Արդութեանի
ծառայութիւնները Եկատերինէ մեծի ժամանակ ոչ մի-
այն բազմաթիւ բարձրագոյն հրովարտակների են արժա-
նացել, այլ և Մեծն Եկատերինէն Պօտեմկինի ծրագրով
աւելի օգտաւէտ էր համարում Ռուսաստանի Բարձ-
րագոյն շահերի համար նորա հովանաւորութեան տակ
հայկական ինքնուրոյն մի իշխանութիւն ստեղծել,
որի կազմակերպութեան ծրագիրն 1786 թուին Պե-
տերբուրդ գրուեց, իսկ 1789 թուին հաղորդուե-
ցաւ Էջմիածնին, բայց անկատար մնաց (տես «Դիւան Հայոց
պատմութեան» գիրք Դ. յաւելուած Ա.) անշուշտ կայս-
րուհու մահուան պատճառով:

Վրաստանի միացման ժամանակ 1801 թուի սեպ-
տեմբերի 12-ին Պօլոս կայսեր մի բեսկրիպտուր կայ նոր
երկրի կառավարութեան համար, ուր հայերի մասին ա-
սուած է. «Ձեր առանձին ուշադրութեանն եմ առաջար-
կում գրաւելու Հայ ազգը ամեն կերպ փաղաքշելով նոցա,
այս նպատակով բարեհաճում ենք, որ գուք կարելոյն
շափ հովանաւորէք Էջմիածնի—Արքարատեան Մայր Ա-

թոռը և այդ եկեղեցու պետի հետ բարեկամական յարաբերութիւններ պահպանէք»:

Յետագայ ըոլոր պատերազմների ժամանակ հայերի կատարած դերը յօդուտ Ռուսաստանի այնքան նշանաւոր է, որ ոչ մի ժամանակաւոր անարդարութիւն չի կարող պատմութիւնից նշել հայի մատուցած անթիւ ծառայութիւնները:

Այս, պատմութիւնը վերջապէս իւր գործը պիտի կատարէ:

Նոյն իսկ Պասկեվիչը, որ առանձին սէր չէր զգում գէպի հայերը, ահա թէ ինչ է գրում Ադրիանապօլսի դաշնադրութիւնը կապելուց յետոյ 1829 թ. հոկտ. 10-ի իւր ամենահպատակօրէն զեկուցման մէջ առ Նիկողայոս Ա. կայսր. «Եյս հեռաւոր աշխարհներում, ուր քրիստոնէութիւնը երկար դարեր ճնշուած էր անարդար լծի տակ, Զեր մեծութեան զօրքը չէր վախենում թշնամու գործուղութիւններից հայերի և յոյների շնորհիւ. Բայց զիտում 2000 հայ կռւում էին մեր զինուորների շարքում. Ղարսում հայերից կազմուած էր մի բատալիօն և մինչեւ 800 այրուձի հայերից պահպանում էին սահմանը արշաւանքների դէմ: Արժանացըէք, ամենողորմած թագաւոր, Զեր ողօրմած ուշադրութեան այս դժբաղդ զօները և մի թողնէք, որ օսմանցիների կամայականութիւնը վրէժինդիր լինի նոցա այն անձնուիրութեան համար, որ նոքա ցոյց տուին Ռուսիային»:

Ներսէս հինգերորդ Աշտարակեցու անձնուիրութիւնը գէպի Ռուսիան և նորա գործերը պատմական անհերքելի փաստեր են, որոց նշանակութիւնը կովկասի տիրապետութեան պատմութեան մէջ ահագին է և անվիճելի:

Վերջին Ռուս-Թուրքական պատերազմի ժամանակ կատարուած իրողութիւններն այնքան մօտ ժամանակուայ անցքեր են, որ բոլորին էլ յայտնի են և մենք աւելորդ ենք համարում կրկնել այստեղ. Այս պա-

տերապմի վերջանալու ժամանակ էր, որ աղատարար Ա. Բ. կայսեր անմիջական նախաձեռնութեամբ ծնունդ առաւ հայկական խնդիրը և Թուրքիայի հայաբնակ գաւառների մէջ բէֆօրմներ մտցնելու կարեսրութիւնը Եւրոպական քաղաքագիտութեան և միջազգային խնդիրների շարքն անցաւ։ Ս. Ստեֆանոյի դաշնադրութեան 19 յօդուածն էր, որ պահանջում էր Թուրքիայից բէֆօրմներ մտցնել այդ գաւառներում, իսկ Բերլինի դաշնագիրը այդ յօդուածը վերափոխեց 61-րդ յօդուածին։

Ահա այսպէս ծագեց հայկական խնդիրը և ներկայ հայ յեղափոխական տարրերը աւելի չեն պահանջում, քան ինչ որ պահանջել է Ռուսաստանի դիպլոմատիան դարերի ընթացքում, ծրագրել է և խոստացել հայերին։

Ներկայ հանգամանքները ոչ մի կասկած չեն թողնում, որ Ռուսաստանի նախկին քաղաքագիտութիւնը աւելի ուղիղ ճանապարհի վրայ էր և որ իւր աւանդական քաղաքականութիւնից շեղուելը շատ վտանգաւոր և զնամակար եղաւ Ռուսաստանի շահերի համար մօտակայ Արևելքում, ուր գերմանական ազդեցութիւնը զօրեղացաւ և փոխարինեց Ռուսաստանի պատմական դերին։

Այժմ մեր առաջ նորից կանգնած է Ռուսաստանի յարաբերութեան խնդիրը դէպի կովկասի աղգութիւնները, որոնցից ամեն մէկը իւր ցանկութիւնները և իւր իղձերն է արտայայտում։ Ահա թէ ինչու մի այսպիսի ժամանակ մենք կարեոր համարեցինք մի կարճ ակնարկ ձգել պատմութեան վրայ։ Եեշտենք մի անդամ ևս, որ անցեալն է ծնում ներկան ու ապագան, Անցեալի ուղիղ հասկացողութիւնը զեկավար պիտի լինի ներկայի խընդիրները լուծելու համար։ Իսկ անցեալն այն է, որ հայը Ռուսաստանի բնական և անձնուէր բարեկամն է եղել և պատմաբանօրէն այլապէս էլ լինել չէր կարող, յայտնի քաղաքական և աշխարհագրական փակտորների շնորհիւ ժամանակ է ուրեմն, որ Ռուսաստանի պետական

անձինք փաքր ինչ աւելի գնահատեն պատմութիւնը և հայ ժօղովուրդն էլ լուրջ կերպով հասկանայ, որ ընդհանուր Ռուսաստանի բարօրութիւնից է կախուած Կովկասեան հայութեան բաղդաւորութիւնը և այսօր էլ հայը նոյն անձնութիրութեամբ միացած է Ռուսիայի պատմութեան և ապագայի հետ, որպէս հարիւրաւոր տարիներ առաջ:

Իսկ հայի պահանջները այնքան տարրական են, այնքան իրաւացի, որ միմիայն վերջին տաս—քսան տարուայ բիւրոկրատիայի միանգամայն անհայրենսասիրական ուղղութեան շնորհիւ էր, որ այդ ցանկութիւնները խեղդուեցին: Ի՞նչ է խնդրում այսօր հայը, որի համար այնքան անմեղ զօհեր է տուել և տալիս: Հայը խնդրում է.—Հայաստաննեաց եկեղեցու կատարեալ և նոյն իսկ բոլոր ոչ-բրիստոնեայ գոռող աշխարհակալներից ճանաչուած ինքնուրոյնութիւն, որ վերջին ժամանակներումն է միայն խախտուել, եկեղեցական կալուածների սեփականութեան վերադարձը, հայոց նախկին դպրոցների բացումը 1871 թուականի կանոնադրութեամբ, արդար վերաբերմունք դէպի հայ դիւզացու տնտեսական պահանջները, իսկ թիւրքահայերի նկատմամբ ցանկանում է իրագործուած տեսնել Ռուսաստանի աւանդական քաղաքականութեան լաւագոյն և լայն ծրագիրները, որոնք ամփոփուած են Սանստէֆանոյի 19-րդ և Բերլինի վեհաժողովի 61-րդ յօդուածներում: Հայը մօտաւոր Ասիայի միակ ազգն է, որ Ռուսաստանի հովանաւորութեան տակ իրու ինքնավար ժողովուրդ մեծապէս կնպաստէ Եւրոպական կուլտուրայի տարածման մօտաւոր արևելքում, որ և Ռուսիայի կոչումն է եղել միշտ: Այս է պատմական ճշմարտութիւնը:

ԳԱՐ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ